

«Հ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե

Հարկային մարմնի գանգատարկման հանձնաժողով

Ո Ր Ո Շ ՈՒ Մ 13/2

19 մարտի 2013թ.

Քննարկվեց «Հոստուն» ՍՊԸ տնօրենի 09.03.2013թ. դիմում-գանգատը « ԿԱ ՊԵԿ նախագահի տեղակալի վարչական իրավախախտման գործի վերաբերյալ 25.02.2013թ. թիվ 217301 որոշման դեմ:

«Հոստուն» ՍՊԸ տնօրենի դիմում-գանգատում մասնավորապես նշված է.

«Հ ԿԱ ՊԵԿ նախագահի տեղակալը 25.02.2013թ-ին կայացրել է թիվ 217301 որոշումը և «Հոստուն» ՍՊԸ-ի տնօրեն Ա.Խուդոյանի նկատմամբ նշանակել տուգանք 250.000 դրամ ՎԻՎ օրենսգրքի 182.1 հոդվածի հատկանիշներով, այն է՝ «Պաշտոնատար անձանց գործողությունները խոչընդոտելու կապակցությամբ»:

Ընդունված որոշման մեջ նշված փաստերը չեն համապատասխանում իրականությանը, այն անօրինական է և ենթակա է վերացման հետևյալ պատճառաբանությամբ:

25.02.2013թ. թիվ 217301 որոշումը կայացվել է 21.01.2013թ. թիվ 7 արձանագրության հիման վրա, որն էլ իր հերթին կազմվել է 18.12.2012թ. «Հ ԿԱ ՊԵԿ Եղեգնաձորի ՏՀՏ պետի զեկուցագրի հիման վրա, իսկ զեկուցագրում առկա բոլոր փաստերն անհիմն են և չեն համապատասխանում իրականությանը:

Վերոնշյալ վարչական գործի քննության ընթացքում ներկայացված բացատրություններում պարզաբանել ենք եղելությունը և ներկայացրել ապացույցներ, որոնք ակնհայտ վկայում են «Հ ԿԱ ՊԵԿ Եղեգնաձորի ՏՀՏ աշխատողների անօրինական գործողությունները, ապացուցել ենք, որ ոչ մի վարչական իրավախախտում իմ կողմից չի իրականացվել: Սակայն, ինչպես երևում է որոշում կայացնելիս ոչ մի բացատրություն և ապացույց հաշվի չի առնվել:

Որոշման մեջ վկայակոչվել է «Հ-ում ստուգումների կազմակերպման և անցկացման մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի «ա» և «բ» կետերի խախտումը, այն է՝ տնտեսավարող սուբյեկտի պաշտոնատար անձինք պարտավոր են՝

ա) չխոչընդոտել ստուգումների ընթացքին, կատարել ստուգումն իրականացնող անձանց օրինական պահանջները.

բ) ստուգումն իրականացնող պաշտոնատար անձի պահանջով ներկայացնել պահանջվող փաստաթղթերը, տվյալները, տրամադրել դրանց լուսապատճենները, կրկնօրինակները և այլ տեղեկություններ:

Ես նույնիսկ չեմ իմացել, որ այդ օրը այդ 4 անձինք եկել են ստուգում իրականացնելու, նրանք ոչ մի փաստաթուղթ, ոչ մի հանձնարարագիր չեն ներկայացրել, ես միայն իմացել եմ որ նրանք հարկային աշխատողներ են, երբ վերջում /որպես հաճախորդներ գնում կատարելուց, ՀԻՄ ՀՀ հաշվետվություն թոցնելուց, խանութից դուրս գալուց և հետ վերադառնալուց հետո/ իրենք են ասել, որ հարկային աշխատողներ են: Եթե չեմ իմացել ստուգման մասին, ինչպես կարող եմ խոչընդոտել ստուգման ընթացքին: Ստուգման հանձնարարագիր չներկայացնելու փաստի մասին ներկայացված բացատրություններում բերվել է ապացույց, այն է, որ այդ 4 հարկային աշխատողները սկզբում իրենց ասված «հսկիչ գնումը» իրականացրել են ընկերությանը պատկանող բենզալցակայանում, սակայն ոչ մի փաստաթուղթ, հանձնարարագիր ստուգման մասին չեն ներկայացրել, չունեն բենզալցակայանի ՀՀ հաշվետվություն: Այս ամբողջը վկայում է հանձնարարագիր չներկայացնելու մասին: Իսկ Եղեգնաձորի ՏՀՏ ոչ մի ապացույց չի ներկայացրել հանձնարարագիր ներկայացնելու վերաբերյալ, սակայն որոշում է կայացվել այդ հիմքով, ինչն անհասկանալի է և անընդունելի:

21.01.2013թ. թիվ 7 արձանագրության վարչական գործի քննության վերաբերյալ ես և իմ ներկայացուցիչը ներկայացրել ենք գրավոր բացատրություն, ծանոթացել ենք 18.12.2012թ. զեկուցագրին, որում առկա չէր ոչ մի ապացույց հանձնարարագիր ներկայացնելու վերաբերյալ: Զեկուցագրում միայն հարկային տեսուչների լոկ խոսքերն էին այն մասին, որ ներկայացրել են

հանձնարարագիր: Սակայն, նրանց գործողություններն այլ բան էին ապացուցում, ինչի վերաբերյալ ՊԵԿ-ում ներկայացրել ենք:

Ինչ վերաբերվում է իրավախախտում կատարելու համար վկայակոչված հոդվածի <բ> կետին, ապա դրա իմաստը նույնիսկ չեմ հասկանում, քանի որ ինձանից ոչ մի փաստաթուղթ, ոչ մի տվյալ, ոչ մի փաստաթղթի լուսապատճե չի պահանջվել: Ստուգողներն ընդամենը 10 րոպեի ընթացքում սովորական հաճախորդի նման կատարել են առևտուր, վերջի պահին ներկայացել են հարկայինի աշխատող, հետո պահանջել են հետ ընդունել գնված ապրանքը ու դուրս եկել գնացել:

Ես վարչական գործի ավարտին եմ միայն իմացել, որ քննվող վարչական գործում առկա է գնված ծխախոտի ՀԴՄ ՀՀ հաշվետվություն և նույնիսկ ինչ-որ հետ վերադարձի կտրոն: Նոր եմ հասկանում, թե ինչու էին պահանջում հետ ընդունել գնված ծխախոտը, քանի որ նրանք հաշվիչից թոցրել են նաև այդպիսի փաստաթուղթ: Գործի տարբեր հանգամանքների քննության ընթացքում բարձրաձայնել եմ այդ փաստը, թե ինչու հարկային աշխատողը պահանջեց հետ ընդունել գնված ծխախոտը, սակայն ոչ ոք չպարզաբանեց այդ հարցը: Բնականաբար ինձ չէին ասելու, որ նրանք առանց իմ իմացության և բացատրելու, թե որը որից հետո է և ինչպես է իրականացվում օրենքի պահանջները, հաշվիչից թոցրել են հետ վերադարձի կտրոնը, ու դրպեսզի դա օրինական լիներ պետք է հետ վերադարձնեին ծխախոտը:

Ելնելով վերոգրյալից խնդրում եմ անվավեր ճանաչել ՀՀ ԿԱ ՊԵԿ նախագահի տեղակալի 25. 02.2013թ. թիվ 217301 որոշումը:

ՀՀ ԿԱ ՊԵԿ հարկային մարմնի գանգատարկման հանձնաժողովը (այսուհետ նաև Հանձնաժողով), հաշվի առնելով դիմում-գանգատում բերված փաստարկները, ուսումնասիրելով սույն գործին առնչվող նյութերն ու ապացույցները եկավ հետևյալ եզրակացության:

Քննարկման ընթացքում նշվեց, որ ՀՀ ԿԱ ՊԵԿ Եղեգնաձորի ՏՀՏ պետը 07.12.2012թ-ին հրապարակել է թիվ 2118151 հանձնարարագիրը՝ «Հոստուն» ՍՊԸ-ում (այսուհետ նաև ընկերություն) հսկիչ-դրամարկղային մեքենաների կիրառման ճշտության ստուգում կատարելու վերաբերյալ:

Վերոգրյալ հանձնարարագրի պահանջը կատարելու նպատակով դրանում ընդգրկված պաշտոնատար անձինք 13.12.2012թ-ին նախ այցելել են ընկերությանը պատկանող բենզալցակայան և կատարել հսկիչ գնում: Սակայն, բենզալցակայանում ՀՀ օրենսդրության պահանջների խախտում չի արձանագրվել: Դրանից հետո, ստուգումն իրականացնող անձինք այցելել են բենզալցակայանին կից գտնվող խանութ, որը նույնպես պատկանում է ընկերությանը: Խանութում ևս կատարվել է հսկիչ գնում՝ գնվել է 1 տուփ «Ռեդվայր» տեսակի ծխախոտ, որի դիմաց վճարվել է 270 դրամ: Սակայն, «Հոստուն» ՍՊԸ տնօրենը, որը միևնույն ժամանակ հանդիսացել խանութի վաճառողը, գումարը չի մուտքագրել ՀԴՄ և չի տրամադրվել ՀԴՄ կտրոն:

Ստուգող անձինք ընկերության տնօրենին տեղեկացրել են կատարված խախտման՝ ՀԴՄ կտրոն չտրամադրելու վերաբերյալ, ներկայացրել են ծառայողական վկայականները և ստուգման հանձնարարագիրը: Ընկերության տնօրենը վերցրել է հանձնարարագրի իր օրինակը, սակայն հրաժարվել է ստորագրել հանձնարարագրի մյուս օրինակի վրա և վերադարձնել այն ստուգող պաշտոնատար անձանց: Բացի այդ, ընկերության տնօրենը առևտրակետ է հրավիրել Շատինի համայնքապետին, որն իր գործողություններով ստեղծել է լարված իրավիճակ: Նշված փաստերի վերաբերյալ ստուգումն իրականացնող պաշտոնատար անձանց կողմից 13.12.2012թ-ին Եղեգնաձորի ՏՀՏ պետին ներկայացվել է զեկուցագիր, որը և հիմք է հանդիսացել վերջինիս կողմից ՀՀ ոստիկանության քննչական գլխավոր վարչության Վայոց Ձորի մարզի բաժնի պետին և ՀՀ ԿԱ ՊԵԿ իրավաբանական վարչության պետին համապատասխան գրությունների ուղղման համար:

Տվյալ դեպքում հարկ է նշել, որ «Հայաստանի Հանրապետությունում ստուգումների կազմակերպման և անցկացման մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն, հանձնարարագրի երկու օրինակը, ստուգումն սկսելուց առնվազն երեք աշխատանքային օր առաջ, սովորում է տնտեսավարող սուբյեկտի ղեկավարին կամ նրան փոխարինող պաշտոնատար անձին, բացառությամբ հսկիչ-դրամարկղային մեքենաների կիրառման խախտումների բացահայտմանն ուղղված դեպքերում իրականացվող ստուգումների: Վերջինս պարտավոր է ստորագրել մեկ օրինակի վրա՝ հաստատելով, որ ծանուցված է ստուգման անցկացման մասին: Ստորագրված օրինակը վերադարձվում է ստուգող պետական մարմնի պաշտոնատար անձին:

Հարկ է նշել նաև, որ «Հայաստանի Հանրապետությունում ստուգումների կազմակերպման և անցկացման մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի համաձայն. «Տնտեսավարող սուբյեկտի պաշտոնատար անձինք պարտավոր են՝

ա) չխոչընդոտել ստուգումների ընթացքին, կատարել ստուգումն իրականացնող անձանց օրինական պահանջները.

բ) ստուգումն իրականացնող պաշտոնատար անձի պահանջով ներկայացնել պահանջվող փաստաթղթերը, տվյալները, տրամադրել դրանց լուսապատճենները (լուսապատճենահանման ծախսերը կատարվում են ստուգումն իրականացնող մարմնի կողմից), կրկնօրինակները և այլ տեղեկություններ: Իսկ նույն հոդվածի «գ» ենթակետի համաձայն՝ տնտեսավարող սուբյեկտի պաշտոնատար անձինք պարտավոր են անհրաժեշտ պայմաններ ստեղծել ստուգումն իրականացնող անձանց գործունեության համար:

Նշված նորմերի վերլուծությունից հետևում է, որ Հայաստանի Հանրապետությունում ստուգումների կազմակերպման և անցկացման վարույթի ընթացքում պարտականություններ են դրված ոչ միայն ստուգում իրականացնող անձանց, այլ նաև տնտեսավարող սուբյեկտի պաշտոնատար անձի վրա:

Հանձնաժողովը գտնում է, որ քննարկվող դեպքում ընկերության տնօրենը «Հայաստանի Հանրապետությունում ստուգումների կազմակերպման և անցկացման մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի 3-րդ մասով սահմանված պարտականությունը չկատարելու, ինչպես նաև Շատինի համայնքապետին առևտրակետ հրավիրելու հետևանքով, ըստ էության, թույլ է տվել նույն օրենքի 10-րդ հոդվածի հիշատակված կետերով սահմանված պահանջների խախտում: Այսինքն, ընկերության տնօրենի կողմից կատարվել է խախտում, որը համապատասխանում է «Վարչական իրավախախտումների վերաբերյալ» ՀՀ օրենսգրքի 182.1 հոդվածի հատկանիշներին:

Ելնելով վերոգրյալից՝ Հանձնաժողովը եզրակացնում է, որ ՀՀ ԿԱ ՊԵԿ նախագահի տեղակալի վարչական իրավախախտման գործի վերաբերյալ 25.02.2013թ. թիվ 217301 որոշումը կայացվել է ՀՀ օրենսդրության պահանջներին համապատասխան:

Ինչ վերաբերվում է դիմում-գանգատում բերված այն պնդմանը, որ հարկային աշխատողները սկզբում հսկիչ գնումն իրականացրել են ընկերությանը պատկանող բենզալցակայանում, սակայն ստուգման վերաբերյալ հանձնարարագիր չեն ներկայացրել և չեն հանել բենզալցակայանի «Z» հաշվետվությունը, ինչը վկայում է հանձնարարագիր չներկայացնելու մասին, ապա այդ կապակցությամբ նշվեց, որ հսկիչ գնումը կատարվել է ընկերությանը պատկանող բենզալցակայանում: Սակայն, քանի որ խախտում չի արձանագրվել, հետևապես բացակայել է ՀԴԼ-ից «Z» հաշվետվությունը դուրս բերելու անհրաժեշտությունը: Ինչ վերաբերում է ստուգման հանձնարարագիրը բենզալցակայանում չներկայացնելուն, ապա դրա պատճառը հանդիսացել է այն հանգամանքը, որ բենզալցակայանի հարևանությամբ գտնվող խանութում դեռևս չէին իրականացվել հանձնարարագրով նախատեսված գործողությունները:


Ելնելով քննարկման արդյունքներից և ղեկավարվելով «Հարկային ծառայության մասին» ՀՀ օրենքի 43.1-րդ հոդվածի պահանջներով հանձնաժողովը

ո Ր Ո Շ Ո Ւ Մ է՝

ՀՀ ԿԱ ՊԵԿ նախագահի տեղակալի վարչական իրավախախտման գործի վերաբերյալ 25.02.2013թ. թիվ 217301 որոշումը թողնել անփոփոխ, իսկ գանգատը՝ առանց բավարարման:

Որոշմանը չհամաձայնվելու դեպքում տնտեսավարող սուբյեկտի ղեկավարը կամ նրան փոխարինող պաշտոնատար անձն իրավունք ունի բողոքարկել դատարան:

Հանձնաժողովի նախ



Տ.ԲԱՐՍԵՂՅԱՆ